«ՆՈՐՔԻ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-1-Ն-10

ք. Երևան « 01 » փետրվարի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Կարեն Սարգսյանի ԱՁ-ն, ի դեմս Կ. Սարգսյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _3_ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տույժը.

գ) հրաժարվել պայմանագրի կատարումից և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագրի խախտումն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _1_ օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին:**

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3066334 (երկու միլիոն ութ հարյուր վեց հազար յոթ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

- Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2__ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____5____ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հանդիպակած պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100103660000

Աշխատակազմի ղեկավար ............................Ա. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կարեն Սարգսյան» Ա/Ձ
ք. Երևան, Գայի 1/106
ՀՎՀՀ 25268814
«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-Սի Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 002-269363-001

Տնօրեն ............................ Կ. Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
« 01 » փետրվարի 2018 թ. կնքված
«ԱՄՀՆ-ՊՈԱԿ ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-1-Ն-10» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը*** | Ժամկետը** |
| 4 | 15331139 | Լոլիկ | ՀՀ | Ներկայացված է առդիր | կգ | 135 | 340065 | 2519 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 2519 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 6 | 15331161 | Սոխ | ՀՀ | Ներկայացված է առդիր | կգ | 159 | 667482 | 4198 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 4198 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 15 | 15331131 | Լոբի կանաչ | ՀՀ | Ներկայացված է առդիր | կգ | 309 | 259560 | 840 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 840 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 18 | 03221420 | Ծաղկակաղամբ | ՀՀ | Ներկայացված է առդիր | կգ | 167 | 98196 | 588 | ք. Երևան Նորք-Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 588 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 30 | 03222119 | Նարինջ | Վրաստանի Հանրապետություն | Ներկայացված է առդիր | կգ | 440 | 664840 | 1511 | ք. Երևան Նորք-Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 1511 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 32 | 03222121 | Մանդարին | Վրաստանի Հանրապետություն | Ներկայացված է առդիր | կգ | 285 | 430635 | 1511 | ք. Երևան Նորք-Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 1511 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 34 | 03222129 | Տանձ | ՀՀ | Ներկայացված է առդիր | կգ | 297 | 174636 | 588 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի | 588 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | փող., 197ա | | հիման վրա |
| 35 | 3222119 | Արքայանարինջ | ՀՀ | Ներկայացված է ստորև | կգ | 327 | 192276 | 588 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 588 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 38 | 03222131 | Ծիրան | ՀՀ | Ներկայացված է ստորև | կգ | 260 | 131040 | 504 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 504 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |
| 118 | 15331153 | Ոսպ | ՌԴ | Ներկայացված է ստորև | կգ | 427 | 107604 | 252 | ք. Երևան Նորք Մարաշ Արմենակ Արմենակյանի փող., 197ա | 252 | Ըստ պատվիրատուի պահանջի՝ գնման հայտի հիման վրա |

*** Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մատակարարման ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**** Գնման ժամանակացույցով սահմանված են առավելագույն քանակները: Կողմը կարող են փոփոխել՝ պայմանավորված շահառուների ընթացակարգի փոփոխությամբ:*

| | | | |
|---|---|---|---|
| **Բանջարեղեն** | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պահանջներ՝ Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | |
| 4 | 15331139 | Լոլիկ | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, կարմիր, թարմ, ամբողջական, չփտած: |
| 6 | 15331161 | Սոխ | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, թարմ, չոր, կճեպով կամ քաղցր, առողջ, առանց արտաքին և ներքին վնասվածքների: |
| 15 | 15331131 | Լոբի կանաչ | Լոբի կանաչ, առանց թելի, մատղաշ, թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, չջարդված պատիճներով: |
| 18 | 03221420 | Ծաղկակաղամբ | Թարմ, ամբողջական, մաքուր, առողջ: |
| **Մրգեր** | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պահանջներ՝ անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | |
| 30 | 03222119 | Նարինջ | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների: |
| 32 | 03222121 | Մանդարին | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 5սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների: Պտղին պտղակոթով: |
| 34 | 03222129 | Տանձ | Թարմ, առողջ, չփտած, սորտին հատուկ ձևով և գույնով, մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս: |
| 35 | 3222119 | Արքայանարինջ | Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, թարմ, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, չփտած: |
| 38 | 03222131 | Ծիրան | Ծիրան թարմ, ծիրանին հատուկ ձևով և գույնով, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների: |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդեղեն, Ձավարեղեն, Մակարոնեղեն | | | |
| Ընդեղեն | | | |
| Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | | | |
| 118 | 15331153 | Ոսպ | Համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ 14,0-17,0 % ոչ ավելի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: |

**ԳՆՈՐԴ**

Աշխատակազմի
ղեկավար ........................Ա.Գրիգորյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Տնօրեն ........................ Կ. Սարգսյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« 01 » փետրվարի 2018թ. կնքված
«ԱՄԿՆ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-18/1-6-1-Ն-10» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնման առարկայի նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | որից վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ.ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 15331139 | Լոլիկ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 6 | 15331161 | Սոխ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 15 | 15331131 | Լոբի կանաչ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 18 | 03221420 | Ծաղկակաղամբ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 30 | 03222119 | Նարինջ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 32 | 03222121 | Մանդարին | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 34 | 03222129 | Տանձ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 35 | 3222119 | Արքայանարինջ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 38 | 03222131 | Ծիրան | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |
| 118 | 15331153 | Ոսպ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15 րդ հոդվածի 6 րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/ Կ.Տ

Ձև

Հաստատում եմ՝

Գնորդ՝..................................................

/ՊՈԱԿ-ի անվանումը, տնօրենի անուն, ազգանունը, ստորագրություն, կնիք/

# ԳՆՄԱՆ ՀԱՅՏ N

| հ/հ | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Հայտի ներկայացման ամսաթիվը /օր, ամիս, տարի/ | Ապրանքների մատակարարման ժամկետը /օր, ամիս, տարի/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| .... | | | | | |

**Մատակարարումը իրականացվում է ոչ ուշ, քան մատակարարման օրվա ժամը --:$^{00}$-ը:**

Կազմեց՝ ........................................ /պաշտոնը, անուն ազգանունը/

/ստորագրություն/

Հավելված N 3<br>
« 01 » փետրվարի 2018 թ. կնքված<br>
«ԱԱԿՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ն-1-Ն-10» ծածկագրով պայմանագրի

**Պայմանագրի կողմ**

______________________

______________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

______________________

հվհհ ______________________

**Պատվիրատու**

______________________

______________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

______________________

հվհհ ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ / § ; 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն՝ ի դեմս ______________________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը ներկայացված ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են։

**Ապրանքը հանձնեց**

______________________

ստորագրություն

______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

**Ապրանքն ընդունեց**

______________________

ստորագրություն

______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 01» փետրվարի 2018 թ. կնքված*
*«ԱՄԿՆ-ԳՀԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-1-Ն-10» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը                Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված 11*
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-Ն-10»՝ *ծածկագրով*
*բաց մրցույթի հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «01» փետրվար 2018 թ.

Նորիկ Մարգարյան ԱՁ-ն, ի դեմս Մասնակցի տնօրեն Նորիկ Մարգարյանի(ID000113050 տրվ.005-ի կողմից)
(Մասնակցի անվանումը) (Մասնակցի ղեկավարի անունը, ազգանունը, լիազորությունները)

որը գործում է Մասնակցի կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Մասնակից), սույնով միակողմանի ստանձնում է հետևյալ տուժանքի վճարման պարտավորությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Մասնակիցը մասնակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-Ն-10» ծածկագրով գնման ընթացակարգին։

1.2 Սույն գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագրերը՝ լրացված և հաստատված Մասնակցի կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային փաստաթղթերի կազմման ձևերի, կիրառման փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>։

1.3 Մասնակցի կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագրերը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրեր) ներկայացնում է Մասնակցին սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ որը դրանք պետք է գանձի անվերապահորեն Մասնակցից։

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրերը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին հաստատող փաստաթղթերի ներկայացման դեպքում, որոնք կցվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրերին, Բանկին ներկայացվելու դեպքում։

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման նպատակով առաջացած միջոցների (Մասնակցի կամ Բանկի) համար Բանկը պատասխանատվություն չի կրում։

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրերը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման մասին կցված Մասնակցի մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո)։

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Մասնակցի կողմից ստորագրման պահից և գործում է Մասնակցի կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնված պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ։

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

3. Մասնակցի հասցեն, բանկային վավերապայմանները՝

Մասնակցի անվանումը՝ Ա/Ձ Նորիկ Մարգարյան
Հասցեն՝ Ք. Երևան, [illegible] 1/105
Սպասարկող բանկի անվանումը, Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 002-269363-001
ՀՎՀՀ 25269814
տնօրեն Ն. Մարգարյան

(ստորագրությունը)

գլխ. հաշվապահ

(ստորագրությունը)

Կ.Տ.

| | |
|---|---|
| 1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N *(պայմանագրի կատարման ապահովում)* | |
| 2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. | |
| 3. Ներկայացնող (պահանջատեր՝ վճարող)՝ ԱՁ Կարեն Սարգսյան | |
| 4. Վճարողի բանկը՝ Էյչ-Էս-Բի-Սի բանկ ՓԲԸ | |
| 5. Վճարողի հաշվի համարը՝ 002-269363-001 | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ՝ 25268814 | |
| 7. Վճարողի ՀԾՀ՝ 3708760336 | |
| 8. Ստացող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | |
| 9. Ստացողի ՀՎՀՀ՝ 01506515 | |
| 10. Ստացողի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ | |
| 11. Ստացողի հաշվի համարը /հշ.N/ 2480100103660000 | |
| 12. Գումարը թվերով և բառերով՝ 306634 երեք հարյուր վեց հազար վեց հարյուր երեսունչորս | |
| 13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD | |
| 14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում | |
| 15. Պայմանագրի ծածկագիրը՝ «ԱՍՀՆ-ԴՈԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/1-Ե-Ն-10» | |
| 16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման ամսաթիվը | 17. կից՝ --- էջ |
| 19.ա. Ստացողի ստորագրությունները<br>/___________________/<br>/___________________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/___________________/<br>/___________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է ստացողի բանկի կողմից<br>20.ա. /___________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /___________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |

[1] [illegible]